

Խաբեությունը գլուխ չեկա՛վ

Պատմության տարբեր ժամանակներում Հայաստան կոչեցյալ տարածքից հազարավոր ազրերեղանցիներ մաս-մաս էջվելով հինավուրց տուն ու տեղից, պապենական օջախներից զրկվել, պանդուխտ են դարձել: Դիմելով դեպի հարազատ Հյուսիսային Ադրբեջան, նրանք այս հողում գտել են ապաստան, հանգիստ, բարեկամություն: Իսկ 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբերին այդ տեղանաևության գործողությունն ու ֆաղափական խաբեությունը ավարտին հասցվեց շատ մեծ վարպետությամբ:

Այդ ծրագրի իրականացման գործում Զորի Բալայանի «ծառայությունն» ու մասնակցությունը տեսել եմ սեփական աչքերով...

Մահվան առաջին բոքը նոյեմբերին Կալինե-նոյից եկավ: Այստեղ սպանել էին ինեսուր բոլորած Մահմեդ Բիշուն: Այդ լուրը կայծակի առաջությամբ տարածվեց ամենուր: Դա նոյեմբերի 25-ին էր: Հետո սկսվեց Զորի Բալայանի «միբուխար գինվորների» հարձակումը «ամբողջ հակատու»: Այդ հարձակումների առաջն առնելու համար վնասական միջոցներ ձեռք չառնվեցին, ավելի էր խորանում ազգային բռնամարտը: Գուգարի շրջանում կատարվեցին մարդկայնությանը անհատի վայրենություններ: Քանի-հանի ադրբեջանցիներ զոհ գնացին տրամադրի զնդակի: Հայրական խնամքի, մայրական շոյանքի կարոտ անսնդ երեխաներին էլ կատարեցին:

Նոյեմբերի 26-ին վաղ առավոտյան Ազիզբեկով գյուղի բնակիչ Փաշա Քերիմովի ունեցվածքը Գյանջա տեղափոխող բեռնատարը Համամ-լու (Ներկայիս Սպիտակի) շրջանում միջցիա-

յի աշխատակիցների աչքի առաջ կապողովեց, իսկ կենսաբույսագետու մարդը Իսրայելից ու ստորացվեց: Զգալով նրա մահամերձ լինելը, զինվորականները նրան մի կերպ հասցրին Գյանջայի հիվանդանոցը:

Նոյեմբերի 27-ին մեր զրկից Ֆարամազ Բայրամովի ունեցվածքով բեռնված մեկնան նաևապարհին բեկավ զնդակների «տարափի» տակ, 27 տեղից ծակծկվեց: Գարշապարից վիրավոր ուս վարորդը հրաշքով կենդանի մնաց:

Դեկտեմբերի 4-ին համոզված զաչնակ Զորի Բալայանի նամական անցում էր Ամասիայով: Նրչկենտր Շր գտնվում է հիևավուրց Գյումրիից (Ներկայիս Երեւանի ֆաղափից) 21 կիլոմետր լնաու: Մայրահնդական «գրողի» այստեղ գալը իր նպատակն ուներ: Նա եկել էր իր երկու ժողովուրդների միջև խաղաղություն, վստահություն հաստատելու: Նրչկենտրում նրան դիմավորեցին հանդիսավորությամբ: Ինչ ծանօթ կույր հայր ուրախությունից աշխարհով մեկ էր եղել, երեխայի, պես բոչկոտում էր: «Զորու, Զորու» էր գաչում, շերմեռանդություն ցուցաբերում: Գաղտնի գործող զաչնակցական ծայրահնդական խմբերը հենց տեղում նող առաջադրանքներ ստացան: Ադրբեջանական բրնակչությունը տեղյակ էր, որ նման մարդը ի կարող նշմարիտ նպատակ ունենալ: Մտնող էին նրա ստեղծագործություններին, երկնագույն էկրանից լսել էին նրա զգվելի ելույթները: Իսկ հիմա նա ինքն էր «բարեհաճել»: Մարդիկ շփոթության մեջ էին:

Զ. Բալայանը նույն օրը նաևապարհվեց Օխչոզլու գյուղը, ազգամտենչների ուղեկցությամբ

և օգնությամբ ժողով հրավիրեց: Իրեն ներկայացնելով ուրիշի տեղ, նա տեղ զբաղեցրեց նստարանին: Գյուղի բնակչությունից նրա պահանջը շատ բացահայտ, կտրուկ ու նաև կոնկրետ էր. Մոսկվայից պահանջեմ, որպեսզի Լեռնային Ղարաբաղը միացնեն Հայաստանին: Կհամաձայնվենք ձեզ այստեղ պահել: Երե ոչ, կոչնչացվեմ...

Խնդիրը պարզ էր: Ուսուցիչներից մեկը, ասես հարմար պահի էր սպասում, առաջ գալով հարցրեց.

- Արա... Զորի Բալայանը չե՞ս:
- Ոչ:
- Զի կարող պատահել: Ստում ես.— առաց չղայնացած, ապա իրեն մի կերպ զսպելով, ավելացրեց.
- Դաչնակ, զաչնակի տղա, Ին ուզածը չես կարող ձեռք բերել, ստոր:

Զորի Բալայանը օձը կծածի պես կծկվեց ու շիկնեց: Թուր ու մուր տեղացին նրա երեսին: Այս ամբողջը մի պահ տեղեց: Մպաներն ու ավտոմատավոր զինվորները, զուրյուներ հասկանալով, զենքի ուժով Զորի Բալայանին ազատեցին արանից... Կոտորածի շեմին գտնվող ամառիացի ադրբեջանցիները ստիպված էին առհավետ լքել հարազատ տուն ու տեղը և հայտնվել Ադրբեջանում:

ՍԱԳՐԵԳԻՆ ԶԱՍԱՆՈՎ

բաղաբ Սումգայիթ
(«Վաթան սասի» («Հայրենիքի ձայն»),
3 հոկտ. 1990 թ.)

Այլ — Շիշտ և ճիշտ այսպիսի դեպքերի համար է ասված մեկնաբանություններն ավելորդ են: Իսկապես ի՞նչ ասես, ի՞նչ

պատասխանես նման «թերթերի» (հարեվան հանրապետությունում վերջերս սնկրպես աճում են նման մակարդակի տաննյակ թերթեր) նման «թղթակիցներին»: Եվ ո՞վ է գրում Սումգայիթում ապրող թուրքը: Բա մարդ այնքան ստոր և անինքնասեր լինի, որ ոչ միայն ապրի նման «քաղաքում», այլև հրապարակայնորեն հաղտարարի այդ մասին: Եվ ո՞ւմ հասցնի է վայրահաչում Զորի Բալայանի նման մարդու: Որքա՞ն տեղին է հենց իրենց բանաստեղծ Սամեդ Վուրդունի տողը. «Լուսնյակի վրա շներն են հաչում»...

